

Կազմված է « 19 » « 01 » 2020թ.
Բաղկացած է 16 (տասնվեց) թերթից
Ընդամենը 2 (երկու) օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Արցախի Ազատություն Կուսակցության
19.01.2020թ. կայացած հիմնադիր
համագումարի որոշմամբ
/թիվ 01 արձանագրություն/

Նախագահ՝

ՌԶ

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ԱՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման ամսաթիվ՝ « 31 » « 01 » 2020թ

Գրանցման համար 443.172.1112661

ՀՎՀՀ 90046441

Զ. Ռուբենյան



Գործակալության պետ՝ Գ. Մաքսիմովա

Մաքսիմովա

ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք. Ստեփանակերտ, 2020թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Ազատություն Կուսակցությունը (այսուհետև նաև՝ Կուսակցություն) անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորում է, որն իր գործունեությունն իրականացնում է անդամության կամավորության, իրավահավասարության, օրինականության, ժողովրդավարության և նախաձեռնությունների ազատ դրսևորման սկզբունքներով:
2. Կուսակցությունն իրավաբանական անձ է, օգտվում է ԱՀ օրենսդրությամբ ընձեռված բոլոր իրավունքներից և կրում է դրանցով սահմանված պարտականություններ: Կուսակցությունը, նրա տարածքային ստորաբաժանումները գործում են Կուսակցության կանոնադրության հիման վրա և դրան համապատասխան (այսուհետև՝ Կանոնադրություն):
3. Կուսակցությունը ղեկավարվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության մյուս օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև Կուսակցության ծրագրով:
4. Կուսակցության անվանումն է՝
 - հայերեն՝ Արցախի Ազատություն Կուսակցություն (հապավումը՝ ԱրԱզԿ),
 - ռուսերեն՝ Партия Свобода Арцаха
 - անգլերեն՝ Freedom Party of Artsakh
5. Կուսակցությունն ունի խորհրդանշան, դրոշ, ձևաթուղթ, կնիք, բանկային հաշիվներ, այդ թվում՝ արտարժույթով:
6. Կուսակցության խորհրդանշանը պատկերվում է Կուսակցության դրոշի, կնիքի, ձևաթղթի, կրծքանշանի և անհատականացման մյուս միջոցների վրա:
7. Կուսակցության խորհրդանշանը՝ այն իրենից ներկայացնում է սպիտակ ուրվագծով աղավնի, որի ներքևում պատկերված է ուղղահայաց եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն:
8. Կուսակցության դրոշ՝ կապույտ պաստառ է որի կենտրոնում պատկերված է կուսակցության խորհրդանշանը: Դրոշի ներքևի մասում գրված է կուսակցության անվանումը՝ Արցախի Ազատություն Կուսակցություն:
9. Կուսակցության իրավաբանական հասցեն՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Թումանյան փ. շ. 67/26:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կուսակցության նպատակներն են՝ պաշտպանել ԱՀ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, նպաստել իրավական, ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, աջակցել պետականության ամրապնդմանը ու զարգացմանը:
2. Կուսակցությունն իր գործունեության խնդիրներն է համարում՝

2.1 հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելը

2.2 Արցախի Հանրապետությունում քաղաքական շարունակական սերնդափոխության իրականացում, երիտասարդության քաղաքացիական ներուժի քաղաքականապես ամրագրում՝ վերջիններիս համար գործունեության ազատ դաշտի ստեղծման միջոցով, ինչպես նաև երիտասարդներին օժտելով իրական լծակներով, ռեսուրսներով և հնարավորություն ընձեռելով սեփական